ՉԱՐԽ, պ. ջարխէ, 1. ճախարակ, 2. աղեղ կարծր եւ խիստ,

3. անիւ, 4. Ճակատագրին անիւը:

ՉԱՐԿԱՄ, մ. h., թշնամի:

ՉԱՐԿՄՆՈՒՆ, մ. h., թշնամիներուն:

ՉԱՐՏԱԽ, պ. ջարտաք, տանիքին վրայ զետեղուած քառակուսի սենեակ՝ չորս կողմը բաց, եւ ուր լաթ կը չորցնեն կամ ուր ամառը կ'ելլեն զովանալու, terrasse:

ՉԱՓԼԱ, մ. h., ապտակ, թ. ջափալամաք բայէն ?(saper, houer, փորել, տապալել, քանդել):

ՉԷՆԷՐ, պ. ջինար, սօսի:

ՉԸՄԱԺԱՆ, ՉԸՄԱԺԵՄ. մ. h., անարժէք, աննշան:

ՉԻԼԼԻՐ, ա. բ., չ'ըլլար:

ՉԻՆԱՐ, տես ՉԷՆԷՐ:

ՉԻՐՎԷ, թաշկինակ ? Հանեցի ծոցուս ջիրվէն, ժողվեցի քրտինքն երեսեն:

ՉՕՃՈՒԽ, թ. ջոճուք, տղայ, երեխայ:

Պ.

ՊԱԳ, ՊԱԳԻԿ, մ. h., համբոյր:

ՊԱՁԻՐԿԵԱՆ, ՊԷՁԻՐԿԵԱՆ, Ա. բ., տես ԲԱՁԸՐԿԱՆ:

ՊԱԼ, Ա. բ., թ. մեղր:

ՊԱԼԱՇ, պ. պալիշ, բարձ. իմ եարն մընաց ինձ պալաշ: Թուրքերէն, թաթարերէն, պալիշ, ըստ Հ. Աճարեանի (Արմատական Բառարան), յաղթութեան պատիւ, յաղթութեան պարգեւ, մրցանակ:

ՊԱԽՃԱ, պ. պախջէ, պարտէզ:

ՊԱՀԹ. ա. պախթ, բաղդ:

ՊԱՀՃԱ, տես ՊԱԽՃԱ:

ՊԱՂ, պ., այգի:

ՊԱՂՉԱՅ, տես ՊԱԽՃԱ:

ՊԱՂՊԱՆ, Ա. բ., պ. պաղպան, այգեպան, պարտիզպան:

ՊԱՅՈՍ, Ա. բ., պատուաստ, բողբոջ:

ՊԱՇ, թէ., գլուխ:

ՊԱՇՐԻԿ, մ. h., ճամբու պաշար, ճամբու ուտելիք:

ՊԱՍՐԱԹ, ա. պասիրէթ, աչալրջութիւն, vigilance, perspicacite':

ՊԱՏԸՍԽՈՒՆ, մ. h., պատասխան:

ՊԱՏԸՐԵԼ, մ. h., պատրել, խաբել, կորուստի մատնել:

ՊԱՏԼԵԼ, մ. h., նսեմացնել. զերկուքին լոյսըն կու պատլէ: